ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 15 ԿՎՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-26/96»*

ք.Թալին «15» հուլիսի 2026թ.

Թալինի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Արթուր Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է **15 կվտ հզորության արևային կայանի** մատակարարման պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 21 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած *ապրանքներից.*

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից *պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝* պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա/ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2589480 (երկու միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[1] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[3]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

[2] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[4] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[5]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

---

[4] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը նախատեսում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5] *Պետական բյուջեի եկամուտների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, *որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ* պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[6]

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[6] *Եթե գնորդը հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

8.12 Պայմանագիրը կազմված է _6_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Թալինի համայնքապետարան	«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1	ՀՀ ք. Երևան, Կորյունի 8/4
Բանկ՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ
ՀՀ 9004620151045	Հ/Հ 2500010901910100
ՀՎՀՀ 05030561	ՀՎՀՀ 02657839
Համայնքի ղեկավար Ֆ.Մնացականյան	Տնօրեն Ա.Ս.Մատևոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«15» հուլիսի 2026 թ. կնքված
ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-26/96 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	09331100	15 կվտ հզորության արևային կայանի ձեռքբերում և տեղադրում	Jinko solar 630w Growatt 15kw Goodwe 15kw	Կից ներկայացված հավելված 1.1-ի համաձայն	հատ	2589480	2589480	1	ՀՀ Արագածոտնի մարզ Թալին քաղաք Երևանյան 15/2	1	Պայմանագիրը կնքելուց 21 օր հետո

Հավելված 1.1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՖՎ կայանը պետք է տեղադրվի ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքի Երևանյան 15/2 հասցեում

ՖՎ կայանի վահանակային հզորությունը պետք է լինի ոչ պակաս, քան 15կՎտ, ՖՎ կայանի կազմում նախատեսվում է եռաֆազ փոխակերպիչ(ներ), հզորությունը՝ ոչ պակաս, քան 15 կՎտ: ՖՎ կայանի վահանակները պետք է տեղադրվեն ալյումին կամ ցինկապատ մետաղ հենակառուցվածքով, ապահովելով վահանակների թեքությունը հորիզոնական հարթության նկատմամբ ոչ պակաս, քան 28-30 աստիճան և ապահովելով հարավային ուղղության նկատմամբ շեղումը ոչ ավելի, քան 10 աստիճան:

Ստորև ներկայացված են ՖՎ կայանի բաղադրիչներին ներկայացվող մանրամասն տեխնիկական պահանջները:

ՖՎ Կայանում տեղակայվող մոդուլները պետք լինեն պատրաստված լինեն միևնույն արտադրողի կողմից, ունենան նույնական պարամետրեր: Ստորև բերված են մոդուլների տեխնիկական բնութագրերի նվազագույն պահանջների համախումբը (техническая спецификация):

Արևային վահանակներ (ֆոտովոլտային կայաններ), տեղադրումը իրականացնում է մատակարար կազմակերպությունը՝

- Արևային վահանակները պետք է լինեն նվազագույնը 620Վտ հզորությամբ:
- Պետք է ունենան IEC կամ IECRE, IEEE, TUV, UL կամ նմանատիպ այլ միջազգային սերտիֆիկատ:
- Վահանակի ՕԳԳ-ի նավազագույն չափը պետք է լինի 21,1%:
- Հաստատուն հոսանքի արևային վահանակների և ինվերտորների միացումը պետք է կատարվի հատուկ արևային կցիչների (MC4) և TUV սերտիֆիկատ ունեցող 4 մմ² պղնձե լարերով,
- ՖՎ վահանակների շրջանակները պետք է լինեն արծաթով անոդացված ալյումինե համաձուլվածքից,
- Միակցման տուփը պետք է ունենա MC4 միակցիչ, նվազագույնը IP65 պաշտպանության դաս, ներկառուցված 3 դիոդներ, հերմետիկ, ամուր և ջերմային հոսքերի ցրման հնարավորությամբ, 0,8-1մ երկարությամբ 4մմ² կտրվածքովTUVկամ համարժեք սերտիֆիկատով պղնձե միացման հաղորդալար,
- Մեխանիկական լարումը պետք է լինի՝ քամու դեպքում ≥2400Պա, ձյան դեպքում ≥5400Պա,
- PID free or Anti PID- Պետք է լինեն պոտենցիալ նվազող դեգրադացիայից զուրկ (Potential reduced degradation),
- Պետք է լինեն ուլտրամանուշակագույն ճառագայթների պատճառով դեգրադացիայից ազատ (UV induced degradation free),
- Աշխատանքային ջերմաստիճան -40+85°C,
- 10 տարվա ընթացքում էֆեկտիվությունը պետք է նվազի ոչ ավելի քան 6,05%
- Արևային համակարգի խափանման դեպքում մատակարար կազմակերպությունը պարտավոր է 2 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել առկա թերությունները

1. **Կրող կոնստրուկցիա**

Արևային ֆոտոէլեկտրական մոդուլների կոնստրուկցիայի ձևը և բնական հովացման պայմաններն ապահովել՝ ելնելով հետևյալից.

- Կոնստրուկցիան պետք է լինեն ֆիքսված (անշարժ):
- Կոնստրուկցիան պետք է ապահովի արևի ճառագայթների առավելագույն արդյունավետ անկման անկյունը մոդուլի մակերեսին՝ հաշվարկված տվյա տեղանքի համար:
- Կոնստրուկցիան պետք է ապահովի մոդուլների բնական հովացումը:
- Կոնստրուկցիան պետք է նախատեսվի և տեղադրվի այնպես, որ բացառվի բարձր ջերմաստիճանային պայմաններում հարակից տարրեր գերտաքացումը և որպես հետևանք՝ կորուստների մեծացումը:
- Պետք է հաշվի առնվեն օդերևութաբանական պայմանների (ձյան շերտ, քամու ուժգնություն) ազդեցությունը մոդուլների և կոնստրուկցիաների վրա:
- Կոնստրուկցիան պետք է լինի մետաղից՝ ալյումին կամ ցինկապատ մետաղ:

2. **Ցանցային(ongrid) փոխակերպիչ (ինվերտոր)**

ՖՎ կայանում տեղակայվող ինվերտորը պետք է բավարարի ստորև բերված ինվերտորի տեխնիկական բնութագրերի նվազագույն պահանջներ համախմբին (техническая спецификация):

- Պետք է ունենան IEC, UL, IEEE, CEN, TUV կամ համարժեք այլ միջազգային ստանդարտ,
- պետք է տան սինուսոիդալ փոփոխական հոսանք,
- փոխակերպիչների նվազագույն արդյունավետությունը՝ 97.1%
- ելակետային հաճախությունը 50 Հց,
- Պետք է ունենան հոսանքի և լարման համապատասխան պաշտպանություններ,

- Աշխատանքային ջերմաստիճան (-25÷+60)°C,
- Նվազագույնը IP 65 պաշտպանության դաս,
- Հաստատուն հոսանքի միացումը - MC4 կամ համարժեք միջոցով,
- Փոփոխական հոսանքի միացումը - պտուտակային տերմինալ (винтовая клемма) կամ համարժեք միջոցով:

3. **Միակցման արկղեր և հաղորդալարեր**

ՖՎ Կայանում փոխակերպիչը պետք է ունենա հաստատուն և փոփոխական հոսանքների համար առանձին միակցման տուփ (միակցման արկղի առկայությունը պարտադիր է), որոնց պաշտպանական սարքավորումների նվազագույն կազմը հետևյալն է.

Հ/Հ	Անվանում	Նշանակությունը
1	Հաստատուն հոսանքի ավտոմատ անջատիչ	Յուրաքանչյուր շարքերի միախմբերի ելքում հաստատուն հոսանքի ավտոմատի անջատիչի տեղակայում
2	Հաստատուն հոսանքի շղթայում իմպուլսային գերլարումներից պաշտպանական սարքավորումներ(SPD)	Յուրաքանչյուր շարքի կամ շարքերի միախմբի պաշտպանություն գերլարումներից
3	Փոփոխական հոսանքի ավտոմատ անջատիչ	Փոփոխական հոսանքի կողմում կարճ միացումներից և գերբեռնվածություններից պաշտպանություն
4	Փոփոխական հոսանքի պաշտպանական սարքավորումներ իմպուլսային գերլարումներից(SPD)	Փոփոխական հոսանքի շղթայում գերլարումներից (էլեկտրամագնիսական իմպուլսներից) ինվերտորի պաշտպանություն
5	Հաղորդալարեր՝ հաստատուն հոսանքի կողմում	Նախատեսված արևային կայանների համար

Նախատեսել յուրաքանչյուր շարքի կամ խմբի համար հաստատուն հոսանքի շղթայում իմպուլսային գերլարումներից պաշտպանության սարքավորում, որը հաշվարկված և նախատեսված է հաստատուն հոսանքի շղթայում գերլարումներից և լարման կտրուկ բարձրացումներից պաշտպանության համար:

Հաշվի առնել բոլոր հնարավոր առավելագույն հակադարձ հոսանքները, որոնք կարող են առաջանալ մոդուլներում (դրանց շարքում կամ խմբում) վթարային իրավիճակներում, (օրինակ փոփոխական և հաստատուն հոսանքի շղթաներում միաժամանակյա կարճ միացման առաջացման դեպքերում):

Հոսանքահաղորդիչների և պաշտպանական սարքավորումների ընտրությունն իրականացնել յուրաքանչյուր շղթայի համար առանձին (հաշվի առնելով ինվերտորից դեպի ֆոտոէլեկտրական խումբ հակադարձ հոսանքների մեծությունը):

4. **Հողանցման կոնտուր**

Տարածքում անհրաժեշտ է հաստատուն և փոփոխական հոսանքի շղթաների համար նախատեսել հողանցման կոնտուր, որի օջախի դիմադրությունը պետք է փոքր լինի 4 Օհմ-ից (մասնագիտացված անձնակազմի կողմից չափված և հաստատված):

Անհրաժեշտ է իրականանացնել մոդուլների բաց հաղորդող մասերի հողանցում և պոտենցիալների հավասարեցում:

5. **Միացում գործող ցանցին**

Միացումը գործող ցանցին պետք է իրականացվի համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 23-ի **«Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին թիվ 1939-Ն որոշմամբ հաստատված:**

6. **Երաշխիքներ և սպասարկում**

Հ/Հ	Անվանում	Տարի
1	Ֆոտովոլտային կայանի (բոլոր բաղկացուցիչ մասերի) տեխնիկական սպասարկման երաշխիք	3
2	Փոխակերպչի արտադրողի երաշխիք	5
3	Ֆոտովոլտային մոդուլի արտարողի երաշխիք	12

ԳՆՈՐԴ

Թալինի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1
Բանկ՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00646201510 45
ՄՄՀ 05030561
Համայնքի ղեկավար Ֆ. Խաչիկյան

Ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 8/4
Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010901910100

ՀՎՀՀ 02657859
Տնօրեն Ա.Մարտիրոսյան

Ստորագրություն
Կ.Տ

Հավելված N 2
«15» հուլիսի 2026 թ. կնքված
***ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-26/96** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Այրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	09331400	15 կվտ հզորության արևային կայանի ձեռքբերում և տեղադրում							2589480	2589480	2589480	2589480	2589480	2589480	2589480

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
Թալինի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1
Բանկ՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 9004620151045
ՀՎՀՀ 05030561
Համայնքի ղեկավար՝ Տ. Սափեյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 8/4
Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010901910100

ՀՎՀՀ 02657859
Տնօրեն՝ Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4.2
ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-26/96 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան

«Մոլոր Ընեռջի Լիսատնմ Սոլոթիոնս» ՍՊԸ-ի դեպս Ընկերության տնօրեն Արթուր Մաքսիմոսյանը, որը գործում է «15» հուլիս 2026թ.
Ընկերության անուն ազգանուն, անձնագրային տվյալները
Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Թալինի համայնքապետարան՝ (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը
կազմակերպված՝ ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-26/96՝ ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետևանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /Վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստանալու դեպքում Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն տալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրում նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո Բանկը վճարման պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարելու մասին Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները տրամադրում է «Բրեդիթ Ռեֆորթինգ» ՓԲԸ (Կարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից [illegible] առաջին և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը [illegible] ընդունելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին [illegible]՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս ՍՊԸ

(ընկերության անվանումը)

ք. Երևան Կորյունի 8/

(ընկերության հասցե)

«Ամերիաբանկ» ՓԲԸ

(բանկի անվանումը, մասնաճյուղը)

ՀՀ 2500010901910100

Տնօրեն՝ Արարատ Մաղաքյան

Կ.Տ

15 հուլիս 2026թ.

Գրանցվածի

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը փոխանցելը հրապարակելը:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ Սոլար Էներջի Սիստեմ Սոլուքիոնս ՍՊՀ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 2500010901910100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 02657859

8. Վճարողի ՀԾՀ՝ 3302840535

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ***Թալինի համայնքապետարան***

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ ***05030561***

12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝« ***ՀՀ ՖՆ գործառնական վարչություն***

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) ***900465101096***

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 495,000 (չորս հարյուր իննսունհինգ հազար)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (Նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ 22 դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ << ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-26/96

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___"___20___թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ Կատարման ամսաթիվը՝ "___"___20___թ.

* Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրաման-ով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Հավելված 5.1
ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-26/96 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «15» հուլիս 2026թ.

«Սոլար Էներջի Սիստեմ Սոլյութիոնս» ՍՊԸ-ի դեմս Ընկերության տնօրեն Արթուր Մարտիրոսյանը, որը գործում է
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Թալինի համայնքապետարան (պատվիրատուի անվանումը) (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-26/96 (ընթացակարգի ծածկագիրը) ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար: 1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՐԱՐԱՏ Բրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնած

Պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը

ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս ՍՊԸ

ընկերության անվանումը

ք. Երևան Կորյունի 8/

ընկերության հասցեն

«Արմսվիսբանկ» ՓԲԸ

բանկային հաշվարկային մանրամասներ

ՀՀ 2500010901910100

Տնօրեն՝ Արթուր Մարտիրոսյան

Կ.Տ

15.հուլիս 2026թ.

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս ՍՊՀ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 2500010901910100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 02657859

8. Վճարողի ՀԾՀ՝ 3302840535

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ***Թալինի համայնքապետարան***

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ ***05030561***

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝« ***ՀՀ ՖՆ գործառնական վարչություն***

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) ***900465101096***

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 330,000 (երեք հարյուր երեսուն հազար)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՀՀ ԱՄ ԹՀ ԳՀԱՊԶԲ 26/96

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

* Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրահանգով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: